

Տեղեկատվություն

Մի շարք հասարակական կազմակերպությունների հետ մարզպետարանի համագործակցության մասին

1. Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, մարդկային հասարակության կայուն զարգացման ասոցիացիայի, <<Օրհուսս>> կենտրոնի, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի, <<Կովկաս >> կենտրոնի , << տարածքային կառավարման , << աշխատանքի և սոցիալական նախարարության հետ համատեղ մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցների համար կազմակերպվել են կայուն զարգացման տեսության և գենդերային քաղաքականության վերաբերյալ մի շարք սեմինարներ , կլոր սեղաններ, կոնֆերանսներ: Համատեղ մշակված հարցաթերթիկներով անցկացվել են հարցումներ, միջազգային տարբեր ծրագրերի շրջանակներում հրատարակվել են << ԳԵՕ Հրագրան>> և <<Կայուն քաղաքներ>> գրքույկները: Հրագրանի քաղաքապետերանը և <<Օրհուսս>>կենտրոնը համատեղ ստորագրել են հուշագիր՝ քաղաքապետարանի կողմից էկոլոգիապես կարևոր որոշումներ ընդունելիս քաղաքացիների մասնակցությունն ապահովելու կարգի վերաբերյալ: **2010-2013թթ.**

2. Մարզպետարանը համագործակցելով <<COWI >> միջազգային կազմակերպության հետ՝ մշակել է Կոտայքի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի նախագիծ, իրականացրել է բնապահպանական և սոցիալական ուսումնասիրություններ, որոնց մասին տեղեկատվությունը տեղադրված է Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայքում: **2011թ.**

3. Մարզպետարանի և <<Քաղաքացիական ակադեմիա>> կենտրոնի նախաձեռնությամբ Հրագրան քաղաքը միակը Հայաստանից 2003 թ. ընդգրկվել է <<Կայուն քաղաքներ>> ICLEI միջազգային կազմակերպության խորհրդի մեջ:

4. Տարածքային կառավարման նախարարության, տարբեր կուսակցությունների և մի շարք հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար կազմակերպվել են սեմինարներ համայնքների հզորացման գործում կանանց ակտիվ մասնակցությունն ապահովելու ուղղությամբ: **2007-2013թթ.**